ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսօր 21-րդ դարում, դեպի տեղեկատվական հասարակություն անցման այս փուլում անչափ կարևորվում է կրթական քաղաքականության ճշգրտման ու մշակման խնդիրը, որը ենթադրում է ոչ միայն կազմակերպված ավանդական կրթական (դպրոց, մասնագիտական կրթական հաստատություններ), այլ նաև կրթության շարունակականությունն ապահովող համակարգերի (չափահասների կրթություն, մասնագիտական վերապատրաստում) վերակառուցում: Այս տեսանկյունից կարևոր է որոշել կրթական համակարգերի կառուցման և զարգացման ռազմավարական ուղղությունները, հիմնախնդիր, որը հուզում է համաշխարհային ողջ հանրությանը, այդ թվում նաև մեզ:

Մեր երկրում կրթական համակարգը, կազմակերպելով սովորողների համատեղ ուսուցում (միևնույն կրթական հաստատությունում, նույն դասարանում), սակայն ուսուցման գործընթացը կառուցում է առավելապես ուսուցչի կողմից անհատական ուսուցման սկզբունքով: Առաջանում է հակասություն ուսուցման համատեղ բնույթի և մանկավարժական ներգործության իրականում անհատական ուղղվածության միջև:

Այս հակասության լուծման ճանապարհին ստեղծվում են կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ու կատարելագործման բազմաթիվ ձևեր ու մոդելներ: Դրանցից մեկը վերջին ժամանակներս բավականին շատ քննարկվող ու արծարծվող համագործակցային ուսուցման մոտեցումն է:

Հարկ է նշել, որ ժամանակակից հոգեբանական գրականությունը հարուստ է ուսուցման գործընթացում համատեղ ուսուցման, հաղորդակցման ու համագործակցության արդյունավետության հիմնահարցի վերաբերյալ ամենատարբեր տեսական մոտեցումներով ու բազմազան ուսումնասիրություններով: Ընդ որում, հարկ ենք համարում դրանք ներկայացնել արևմտյան ու խորհրդային հոգեբանների, մանկավարժների մոտեցումների համեմատության համատեքստում, ինչը մի կողմից ցույց է տալիս հատման եզրերն ու աղերսները,

մյուս կողմից էլ, մեր կարծիքով, կապահովի մոտեցումների զարգացման հետագա միտումները:

Կոլեկտիվ ուսումնական աշխատանքի մանրամասն ուսումնասիրությունների հանդիպում ենք Խ. Ի. Լիյմետսի մոտ (20-րդ դարի 70-ական թվականներ): Վերջինս ներկայացնում է խմբային աշխատանքի սոցիալ-հոգեբանական մի շարք չափանիշներ.

- ուսուցչի տված առաջադրանքի ընկալումը դասարանի կողմից որպես խմբային առաջադրանք.
- աշխատանքի ժամանակ խմբի անդամների փոխադարձ կախվածությունը, որն անհնար է առանց նրանց պարտականությունների հստակ բաժանման.
- համատեղ աշխատանքում վերահսկողություն և փոխադարձ պատասխանատվության առկայություն.
- աշխատանքի բաժանման և կատարման ընթացքի վերահսկողության կազմակերպումը սովորողների կողմից: [3, 2-7]

Համատեղ ուսումնական գործունեությունն այս չափանիշներով կազմակերպելիս Դ. Բ. էլկոնինը և Վ.Վ. Դավիդովն առաջարկում են նկատի ունենալ հետևյալ պայմանները.

- առաջադրել այնպիսի խնդիր, որը սովորողն անհատապես լուծել չի կարող,
- ստեղծել երեխաների համատեղ գործունեությունն ապահովող խնդրի լուծման նյութական և նշանային միջոցներ:

Այս տեսակետները խիստ համահունչ են ամերիկացի հոգեբան, մանկավարժ Դեյվիդ և Ռոջեր Ջոնսոնների մոտեցումներին (20-րդ դարի 70-ական թվականներ), որոնք մշակել և ամբողջացրել են համագործակցային ուսուցման ժամանակակից մոտեցումները:

Ջոնսոններն առանձնացնում են համագործակցային ուսումնառության արդյունավետությունն ապահովող հետևյալ բաղադրիչները.

- դրական փոխկախվածություն
- դեմ առ դեմ փոխազդեցություն ,
- անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
- սոցիալական հմտություններ,
- խմբային գործունեության վերլուծություն (խմբային մշակում): [1, 29]

Համագործակցային ուսումնառության տեսության ժամանակակից ներկայացուցիչ, Հելսինկիի համալսարանի պրոֆեսոր Պասի Սահլբերգը (20-րդ դարի վերջ), կարևորելով վերը նշվածները, ավելացնում է ևս մեկ բաղադրիչ փոխներգործուն (ինտերակտիվ) կառուցվածք ունեցող առաջադրանքը, որը մշակված է այնպես, որ այն կատարելու համար անպայման պահանջվում է թիմային աշխատանք (խմբի բոլոր անդամները պետք է ունենան մասնակցելու պատճառներ, առաջադրանքը պետք է խմբի բոլոր անդամներին խոսելու հնարավորություն ընձեռի, խմբի անդամները պետք է ընտրություն կատարեն և որոշում ընդունեն): [8, 14-16]

Այս վերջին բաղադրիչը, մեր կարծիքով, ավելի շատ կարելի է դիտարկել որպես հիմք և պայման, որն ապահովում է մնացած բաղադրիչների դրսևորումն ու կիրառումը: Ավելի ակնառու ցույց տալու համար այս մոտեցումների նմանությունն ու ընդհանրությունները, համեմատական վերլուծությունը ներկայացնենք աղյուսակի տեսքով:

Խ. Ի. Լիյմետս (սկզբունքներ, չափանիշներ)	Դեյվիդ և Ռոջեր Ջոնսոններ (սկզբունքներ, բաղադրիչներ)
• խմբի անդամների փոխադարձ կախվածություն, պարտականությունների հստակ բաժանում.	• դրական փոխկախվածություն • դեմ առ դեմ փոխազդեցություն
• վերահսկողություն և փոխադարձ պատասխանատվություն.	• անհատական հաշվետվություն և պատասխանատվություն,
• աշխատանքի բաժանման և կատարման ընթացքի վերահսկողության կազմակերպումը սովորողների կողմից:	• սոցիալական հմտություններ, • խմբային գործունեության վերլուծություն (խմբային մշակում):
• խմբային առաջադրանք.	
Դ. Բ. Էլկոնին, Վ.Վ. Դավիդով (պայմաններ)	Պասի Սահլբերգ (պայմաններ)
• առաջադրանք, որը սովորողն անհատապես լուծել չի կարող, • համատեղ գործունեությունն ապահովող խնդրի լուծման նյութական և նշանային միջոցներ:	• փոխներգործուն (ինտերակտիվ) կառուցվածք ունեցող առաջադրանքը, որը կատարելու համար պահանջվում է թիմային աշխատանք:

Ինչպես տեսնում ենք, համագործակցային ուսուցման/ուսումնառության որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջական մոդելի,

տեսական հիմքերը, ժամանակակից մոտեցումները, չափանիշներն ու պայմանները գրեթե միաժամանակ մշակվել են և խորհրդային, և արևմտյան հոգեբանների ու մանկավարժների կողմից:

Շատ հոգեբանների (Վ.Ա. Սինիցկայա, Տ.Ե. Կոնոնիկովա, Խ.Ի. Լիյմետս) կատարած փորձարարական հետազոտություններն ու տեսական վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսուցման կոլեկտիվ ձևերը հնարավորություն են ընձեռում միավորել ուսուցման և դաստիարակության գործընթացները: Փորձարարական հետազոտությունները հավաստում են, որ ուսուցման գործընթացում ուսումնական խնդրի լուծման կոլեկտիվ համատեղ եղանակի ներդրումը բերում է ուսումնական գործունեության կատարողական բաղադրիչների առավել հաջող ձևավորմանը, ուսումնական նյութի բովանդակության առավել խորը տիրապետմանը (Տ.Ա.Ցուկերման, Ե.Մ.Երյոմինա), մտածողության ու իմացական կառույցների զարգացմանը (Վ.Վ.Դուբրով, Վ.Ա.Կոլցովա և ուրիշներ), ուսումնական գործունեության ռեֆլեքսիվ բաղադրիչի ձևավորմանն ու զարգացմանը: Վերջինս անչափ կարևոր է կրթության ռազմավարության իրականացման գործում, քանի որ ռեֆլեքսիան ուսումնական գործընթացում ենթադրում է սովորողների կողմից սեփական հնարավորությունների ու գիտելիքների մակարդակի, սեփական աշխատանքի արդյունքները գնահատելու կարողությունը, սեփական աշխատանքի նպատակների ու գործողությունների եղանակների գիտակցումն ու քննարկումը:

Վ.Ա.Կոլցովայի հետազոտությունների համաձայն համագործակցության ժամանակ զգալիորեն բարձրանում է սովորողների զգալի մասի մտածողական գործունեության բեղմնավորությունը: Արդյունքում սովորողների մեջ նկատվում է ուսումնական նյութի ավելի խորն ու համակողմանի վերլուծություն և վերջինիս հիման վրա առավել ամբողջական ու լիարժեք ընդհանրացումներ: Առանձնապես լավանում են ցածր և միջին առաջադիմություն ունեցող սովորողների մտածողական գործունեության արդյունքները:

Համամիտ լինելով վերջին դիտարկմանը, այդուհանդերձ ուզում ենք ավելացնել, որ համագործակցային ուսումնառության ժամանակակից մեկնաբանությունները և մեր սեփական փորձի վերլուծությունը ցույց են տալիս, որ համագործակցային ուսումնառությունն ու ճիշտ կազմակերպված խմբային աշխատանքը ոչ պակաս արդյունավետ է նաև լավ սովորողների համար, քանի որ հայտնի է, որ սովորեցնելով սովորելը յուրացման ամենաբարձր մակարդակն է ապահովվում:

Վ.Ա.Կոլցովան համագործակցության ընթացքում սովորողների մտածողական գործունեության արդյունավետության բարձրացումը բացատրում է

առաջադրանքի համար բազմակողմանի տեղեկատվություն ստանալու, խմբի մյուս անդամների մտածողական գործունեության արգասիքները յուրացնելով սեփական գիտելիքները հարստացնելու, ինչպես նաև առավել պատրաստված սովորողների աշխատանքի եղանակը յուրացնելու հնարավորությամբ: Նրա կարծիքով բարձր առաջադիմությամբ սովորողները աշխատում են թե անհատական, և թե հաղորդակցական գործունեության պայմաններում: Այդուհանդերձ Վ.Ա.Կոլցովան նշում է, սակայն, որ մտածողական գործունեության վրա հաղորդակցման ներգործությունը միանշանակ չէ: Շատ սովորողներ գերադասում են միայնակ աշխատել, ինչը Կոլցովան բացատրում է համատեղ աշխատանքի պայմաններին որոշ սովորողների անպատրաստ լինելով, կոլեկտիվ մտածողության փորձի բացակայությամբ, մի շարք սովորողների մեջ ամրակայված միայն սեփական ուժերին վստահելու կողմնորոշմամբ, ընկերների հետ հաղորդակցվելու պահանջմունքի բացակայությամբ:[3, 60-79]

Նշված հեղինակները գտնում են, որ համատեղ գործունեության կազմակերպման շնորհիվ երեխայի մեջ ձևավորվում են որոշակի գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ, արժեքներ, որոնց վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս խմբավորել ու դասակարգել դրանք հետևյալ կերպ: Ուսուցման կոլեկտիվ (համագործակցային) ձևերի կիրառման արդյունքում երեխաների մեջ ձևավորվում ու զարգանում են

- որոշակի *գիտելիքներ ու հմտություններ*, իմացական դրդապատճառներ, ապահովվում են դասավանդվող առարկայի նպատակների ու միջոցների յուրացումը,
- մտածողության և մյուս *իմացական կառույցները*,
- *վարքագծի կոլեկտիվիստական տարրեր*, զգալի տեղաշարժեր են կատարվում երեխաների փոխհարաբերություններում տեղի է ունենում մերձեցում, աճում է դասարանի համախմբվածությունը, նկատելիորեն լավանում են սովորողների հարաբերությունները, այդ թվում նաև այդ գործունեության մեջ ընդգրկվելու պատրաստակամությունը,
- ուսումնական գործունեության *ռեֆլեքսիվ բաղադրիչը*, ինչպես նաև ուրիշի աշխատանքի գնահատման և ուրիշի դիրքերից սեփական աշխատանքի գնահատման կարողությունները:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ հեղինակները (Խ.Ի. Լիյմետս, Վ.Վ.Ռուբցով, Վ.Ա.Կոլցովա, Տ.Ա.Յուկերման Ե.Մ.Երյոմինա, Վ.Ա.Սինիցկայա, Տ.Ե.Կոնոնիկովա և ուրիշներ) կարևորում են կոլեկտիվ ուսուցման և ակադեմիական, և սոցիալական խնդիրները:

Անդրադառնալով նույն խնդրին՝ Սորտոն Դուտչը (20-րդ դարի 60-ական թվականներ) առավել շեշտադրում է համագործակցային, խմբային ուսուցման գործընթացում սովորողների սոցիալական փոխկախվածության կարևորության գաղափարը, որը տանում է հենց ուսուցողական, ակադեմիական խնդիրների լուծման: Նա մշակում է ուսումնական գործընթացում սոցիալական փոխկախվածության մանրակրկիտ մոդելը տարանջատելով անհատական, մրցակցային և խմբային սոցիալական փոխկախվածության ձևերը: Այս մոտեցումը հետագայում զարգացվեց Ջոնսոնների կողմից «սոցիալական փոխկախվածության տեսության» մեջ, որտեղ շեշտվում է սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների ձեռքբերումների, նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա:

Նույն խնդրին է անդրադառնում նաև դոկտոր Պասի Սալիբերգը ուսուցման և ուսումնառության առումով համագործակցային աշխատանքի առավելությունները նշելիս: Նրա կարծիքով փոքր խմբային աշխատանքն ունի առնվազն երեք առավելություն.

- Ամենից առաջ այն նպաստում է ուսումնական նյութի *բովանդակային կողմի* ընկալման բարելավմանը. գիտելիքների երկարաժամկետ մտապահում, հասկացությունների, սկզբունքների, երևույթների ու իրադարձությունների ըմբռնում ու յուրացում:

Սա, թերևս, կարելի է բացատրել ուսուցման գործընթացում խոսելու, քննարկելու և փոխազդելու լայն հնարավորությամբ:

- Փոքր խմբային աշխատանքը հնարավորություն է ընձեռում սովորողներին հանդես գալ այնպիսի իրավիճակներում, որոնցում նրանք իմացական նպատակներին հասնելուն համընթաց կարող են զարգացնել նաև *սոցիալական, հաղորդակցական հմտություններ:*

Ընդ որում, փոքր խմբերով լավ կազմակերպված աշխատանքի դեպքում նախ հստակեցվում են հիմնական սոցիալական հմտությունները, ապա հետևողականորեն ուսուցանվում:

- Համագործակցային աշխատանքը ձևավորում է դրական դիրքորոշում, նպաստում ուսումնառության նկատմամբ սովորողների տեսակետների, մոտեցումների և արժեքների բարելավմանը: [9, 1]

Համագործակցային ուսուցման առավելությունները հիմնվում են լուրջ ուսումնասիրությունների և հետազոտությունների վրա: Ըստ Ջոնսոնների հաշվարկի 1898-1989թթ. անցկացվել են ավելի քան 550 համեմատական հետազոտություններ համագործակցային, անհատական և մրցակցային ուսուցման արդյունավետությունը պարզելու նպատակով: Այդ Այդ հետազոտությունը-

ները ցույց են տվել, որ համագործակցային ուսուցումը կիրառելի է բոլոր դասարաններում, բոլոր ուսումնական դասընթացներում, ամենատարբեր տարիքային, տնտեսական, ազգային միջավայրերում: Այս հետազոտությունների հիման վրա Ջոնսոններն ու Հոլուբեկը առանձնացնում են երեք արդյունք.

ա) բարձր առաջադիմություն և արդյունավետություն,

բ) ավելի աջակցող և նվիրված հարաբերություններ,

գ) հոգեբանական առողջության, բանիմացության և ինքնարժեվորման ավելի բարձր աստիճան : [7, 7]

Համեմատելով ու վերլուծելով վերը նշված տեսակետները մեզ մնում է ամբողջացնել, որ համագործակցային ուսուցումն ու ուսումնառությունն, անշուշտ, ներառում է ուսումնական խնդիրների իրականացում ընկերների հետ սոցիալական փոխազդեցության, հաղորդակցության և համագործակցության միջոցով, ինչպես նաև ակտիվ մասնակցություն հանձնարարված առաջադրանքների կատարմանը: Իսկ որպես ուսուցման նպատակ ու խնդիր հանդես են գալիս ոչ թե գիտելիքների ու հմտությունների մեխանիկական փոխանցումը, այլ գիտելիքների կառուցման, մտածողության և հմտությունների ձևավորման ակտիվ գործընթացը, որտեղ առաջնային դերակատարումը պատկանում է հենց սովորողներին և նրանց սոցիալական փոխազդեցություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա.Հովաննիսյան, Կ.Հարությունյան, Ս.Խրիմյան, Ս.Խաչատրյան «Համագործակցային ուսուցում», Երևան, «Անտարես» հրատ., 2006:
2. Колцова В.А. Влияние общения на формирование понятий. М., 1977, 232с., Дис.Канд. Псих. наук, 19-00-07.
3. Колцова В.А. Усвоение понятий. в условиях общения . Сб.: Проблема общения в психологии. М., Наука, 1980, с.60-79
4. Лииметс Х. Й. Понятые коллективной работы в советской дидактике. В книге:Актуальные проблемы индивуализации обучения ./Материалы научного симпозиума в Тарту 13-14 октября 1969/. Тарту, 1970, с. 2-7
5. Лииметс Х. Й. Групповая работа на уроке. М., Знание, 1975, 7, 64с.
6. Цукерман Г.А., Ерёмина Е.М. Эффективность коллективно-распределенных форм обучения. Новые исследования в психологии АПН СССР, 2, с.42-46
7. D.Jonson, R.Jonson & Holubec E. 'Cooperation in the Classroom".Boston , MA: Allen and Bacon.
8. Pasi Sahiberg "Elements of Cooperative Learning", University of Helsinki, Finland, 2002. p16